Երիտասարդ Պատմագետների Ասոցիացիա ՀԿ-ի EduArmenia նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2022

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Սան-ուսուցիչ-ծնող հարաբերությունները, որպես ուսումնառության գրավական

Հետազոտող ուսուցիչ՝ Գոհար Ալեքսանյան

Հրազդանի, Խ.Աբովյանի անվան N1 ավագ դպրոցի պատմության ուսուցչուհի

Բովանդակություն_____2

Ներածություն_____ 3-4

1.Ընտանիքի ազդեցությունը երեխայի զարգացման վրա _____4-10

2.Ուսուցիչ-երեխա հարաբերությունների բնութագրական տեսակները_____10-14

3.Ուսուցիչ-ծնող հարաբերություններ _____14-17

4.Եզրակացություն_____ 18-20

5.Օգտագործված գրականություն_____ _____ 21

Ներածություն

Կրթության նպատակները ձևավորում են անձի, հասարակության և պետության շահերը: Այս սուբյեկտներից յուրաքանչյուրը հետապնդում է իր շահերը և ձևավորում կրթությանն ուղղված իր պատվերը: Կրթությունը լավագույնս կազմակերպել՝ նշանակում է ապահովել երեք կողմերի շահերի ներդաշնակություն: Խնդիրը դժվարանում է այն բանով, որ անձի, հասարակության և պետության շահերը չեն համընկնում կամ միշտ չէ, որ համընկնում են: Յուրաքանչյուր մարդ ուզում է սովորել այն ինչ համապատասխանում է իր հակումներին ու հետաքրքրություններին, իր կարողություններին ու աշխարհահայացքային կողմնորոշումներին: Նա ուզում է իր այս ընտրության մեջ բացարձակապես ազատ լինել:

Հասարակությունը, որի մասը ընտանիքն է, իր պատկերացումներն ունի կրթության բովանդակության ու նպատակների մասին և իր շահերին համապատասխան պատվեր է ձևավորում:

Վերջին տարիներին խոսում են տարբեր մեթոդների մասին, որոնք կարևոր են կիրառել անչափահասների կարգապահության և կրթության մեթոդներում: Որոշ ծնողներ տարակուսանք ու խառնաշփոթը հասկանալ է, քանի որ իրենց երեխաներին մեծացնելու դժվարին գործում ինչպիսի՞ հստակ ճանապարհ կա:

Ըստ այդմ մեր կրթության նպատակ է ներդաշնակ միջավայր ստեղծել սան-ուսուցիչ-ծնող փոխհարաբերություններում, քանիզի դա մի կենդանի մեխամիզմ է, որի մի օղակի խափանման դեպքում չի կարող իրացնել իր առջև դրված բարդ ու դժվարին խնդիրները: Խնդիրները շատ են(ուշացումները, բացակայությունները, փախուստ դասերից, բուլինգը, ծնողների ոչ ճիշտ մոտեցումները, սխալ գնահատումը, ծխախոտի օգտագործումը, միջանձնային հարաբերությունները՝ ուսուցիչ-սան, ուսուցիչ-ծնող, ծնող-սան, խաղամոլությունը և այլն), դրանք պետք է ստանան իրենց լուծումները կողմերից յուրաքանչյուրի մասնագիտական մեծ հմտության և պատասխանատվության, կոնֆլիկտները հաղթահարելու մեծ վճռականությամբ:

Այսօրվա ուսուցչից պահանջվում է ոչ միայն մասնագիտական բարձր

որակ, այլ նաև կոնֆլիկտները հաղթահարելու մեծ հմտություն, առանց վնասելու կրթական գործընթացը և միջանձնային հարաբերությունները:

Այսօր առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնցից է հեռախոսն ու համացանցը, այն նպատակին ծառայեցնելու համար երեխաներին պետք է ներգրավել կրթական գործընթացի մեջ, հատկապես կրթական ուսուցանող ծրագրերի կիրառությամբ(Quizizz, Jamboard և այլն):

Ինչպե՞ս անել, որ ճիշտ հարաբերություններ ձևավորվեն ուսուցիչ-սովորող-ծնող եռակ հարաբերություններում:

Սովորողի, ուսուցչի ու ծնողի միջև ձևավորված ճիշտ հարաբերությունները կարող են բարենպաստ լինել եթե **դպրոցը ճիշտ գնահատի յուրաքանչյուր սանի կրթական կարիքները և ապահովի անհրաժեշտ գիտելիքներ՝ փորձառու և հմուտ ուսուցիչների միջոցով, ծնողը վստահի դպրոցին ու պատրաստ լինի աջակցել բոլոր հարցերում, սանը գիտակցելով և կարևորելով կրթությունը՝ ստանա անհրաժեշտ գիտելիքներ իր ապագայի համար**:

Գլուխ 1.

Ընտանիքի ազդեցությունը երեխայի զարգացման վրա

Ընտանիքը բոլոր ժամանակներում եղել է հասարակության մի մասը, արժեքային համակարգի կրողը, չնայած նրան, որ պատմամշակութային յուրաքանչյուր ժամանակաշրջան իր կնիքն է դրել ընտանեկան արժեքների, ավանդույթների և սովորույթների ձևավորման և հասարակության կողմից դրանց ընկալման, ինքնատիպ դրսևորման վրա: Ընտանիքը հանդիսանում է սոցիալ-մշակութային այն միջավայրը, որտեղ երեխան ստանում է առաջին պատկերացումները ընտանեկան արժեքների, ավանդույթների և սովորույթների մասին: Ժամանակակից հասարակության պայմաններում ավանդական ընտանեկան արժեքները կորցրել են իրենց իմաստը, ավանդույթները և սովորույթները վերափոխվել են՝ կարևորություն տալով օտարամուծություններին և նոր տիպի ընտանիքին (մի ծնողից կազմված), ուստի անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալ այս հիմնախնդրին: Յուրաքանչյուր ընտանիք ինքն է ստեղծում իր ընտանեկան սովորույթներն ու ավանդույթները, ձևավորման, զարգացման միջավայրը, հաշվի առնելով իր ընտանեկան մթնոլորտը, ընտանիքի անդամների բնավորություններն ու նախասիրությունները, ինչու չէ նաև մասնագիտությունները: Արժեքային համակարգի, սովորույթների, ավանդույթների և դաստիարակության առանձնահատկությունների ուսումնասիրությամբ զբաղվել են դեռևս հնագույն ժամանակներից, սակայն ոչ միայն փոխվել են ժամանակներն, այլ նաև պահանջները, ուստի այս խնդրի ուսումնասիրությունը չի կորցրել իր կարևորությունն ու արդիականությունը: Ժամանակակից հասարակության մեջ ընտանիքի արժեքային կողմնորոշումները, սովորույթները և ավանդույթները նկատելի փոփոխությունների են ենթարկվել, ինչն էլ իր հերթին հսկայական ազդեցություն է ունենում երեխաների դաստիարակության գործընթացի վրա:

Ընտանեկան դաստիարակության մշակույթն ունի ոչ միայն պահպանող, այլև զարգացնող և փոխանցող բնույթ: Եթե նախնադարում աճող սերնդին դաստիարակում էին զուտ ցեղային կանոններով, ապա այսօր անհրաժեշտություն է դարձել, օրինակ երեխաների մեջ դաստիարակել թվայնացված իրականությունից օգտվելու առողջ վարքագիծ : Ուստի անհրաժեշտ է վերհանել այն ընտանեկան արժեքների, սովորույթների ու երկու ավանդույթների բնորոշ գծերը, որոնք դրականորեն ազդում են երեխաների

դաստիարակության գործընթացի վրա: Ընտանեկան արժեքները և ավանդույթները , դրանք ապագա ունեցող ամուր,մտերմիկ, վստահելի և առողջ ընտանիքի հիմքն են: Դրանք կարգավորում են ընտանիքի անդամների կենսագործունեությունը, նպաստում են ընտանիքում մտերմությանը, փոխադարձ հարգանքի և փոխըմբռնման ամրապնդմանը, այսինքն հանդիսանում են նպաստավոր սոցիալ-մշակութային միջավայր, որտեղ ձևավորվում, զարգանում և դաստիարակություն է ստանում երեխան: Երեխայի անձի ձևավորման գործում մեծ դեր ունեն ընտանիքի հոգևոր արժեքներն ու դրանց փոխանցումը երեխաներին: Մասնավորապես ՝ բարոյականության պարզ նորմերի փոխանցումը՝ բարյացկամություն, ազնվություն, հանդուրժողականություն, հոգատարություն, մարդասիրություն, և այլն: Ընտանեկան արժեքների վրա է ձևավորվում երեխայի առաջին պատկերացումները լավի և վատի, գեղեցիկի և տգեղի, բարու և չարի մասին, երեխան սովորում է սիրել, հասկանալ, վստահել, հոգ տանել: Ժամանակակից ընտանիքներում այսօր շատ հաճախ ենք հանդիպում այն երևույթին, երբ մայրը կամ հայրը , գրեթե չեն մասնակցում երեխայի առօրյային: Իսկ ի՞նչ դեր ունեն ծնողներից յուրաքանչյուրը:

Անփոխարինելի է մոր դերը երեխայի կյանքում: Նույնպիսի ժողովրդի մեջ տարածում ունի այն կարծիքը, որ երեխան իբր միայն մոր կորստյան դեպքում է որբանում:Ստացվում է, որ հոր դերն ու նշանակությունը երկրորդական պլան են մղվում: Գուցե հենց դա է պատճառը, որ որոշ հայր ծնողներ այդպես էլ չեն գիտակցում իրենց կարևորությունը կամ անկախ իրենց կամքից գտնվում են ընտանիքից հեռու(արտագնա աշխատանքի, ազատությունից զրկված և այլն) և ոչնչով չեն մասնակցում երեխայի դաստիարակության դժվարին գործին: Մինչդեռ երեխան ստանձնում է հոր, այլ ոչ թե մոր ազգանունը, շարունակելով նրա սերունդը:

Եթե մայրը մտահոգվում է երեխայի ներաշխարհի ու առողջության համար, ապա հայրը նրա՝ արտաքին աշխարհում կողմնորոշվելու, իր տեղն ու դիրքը գտնելու հարցերով: Բայց ահա շատերը իրենց անմիջական պարտականությունները կատարելու փոխարեն ստեղծում են գեստապոյական դեր և ահ ու սարսափ առաջացնում երեխայի մոտ: Այդ իսկ պատճառով հաճախ հայրն ընկալվում է ոչ թե որպես սիրող ու հոգատար ծնող, այլ պատժող ու դաժան մեքենա:Պատճառն այն է, որ տղա երեխաները երբեմն չեն

դաստիարակվում որպես ապագա հայրեր, այլ միայն որպես ուժեղ ու հեղինակավոր այրեր: Իսկ ահա ուժն ու հեղինակությունը հաճախ սխալ են ընկալվում, հետևաբար, նաև գործածվում:Ուժը թույլին պատժելու միջոց չէ:

Ուժեղ ու հզոր լինելու համար պարտադիր չէ ունենալ ահռելի հասակ և չափսեր: Ուժն ու հզորությունը մարդու իմաստության, բնույթի մեջ են, որոնք նա նաև կարողանում է հմտորեն ի ցույց չդնել: Այսպիսի որակներ ունեցող հայրը կարժանանա զավակների սիրուն ու հարգանքին: Ծնողից վախեցող երեխան իրեն զուսպ է պահում միայն հոր ներկայությամբ, իսկ նրա բացակայության դեպքում շատ ավելի ազատ ու սանձարձակ: Մի՞ թե սա չի նշանակում, որ ժամանակն է փոխելու դաստիարակության ռազմավարությունը: Բայց դրան հասնելու համար մարդ նախևառաջ պետք է ինքնադաստիարակվի, ինչն ավելի բարդ է ու աշխատատար:

Պետք չէ ստանձնել դատավորի դերը, քանզի այսկերպ երեխան, սովորելու փոխարեն, փորձում է գոյատևել հոր կողմից ստեղծած աշխարհում: Երեխան պատժից խուսափելու համար ստիպված է լինում ստել, մեկուսանալ, իշխանության համար հոր հետ մրցել, հակասության մեջ մտնել և այլն: Փաստորեն ձևավորվում է երկու վարքի ձև. մի դեպքում խուսափողական, մյուս դեպքում՝ պայքարի: Երկուսն էլ բացասական հետևանքներ են թողնում երեխայի անձի ձևավորման գործում: Նման դաստիարակություն ստացածը, երբ արդեն ինքն է ծնող դառնում, մոռանալով նախկին ապրումները, իր սեփական երեխայի վրա է թափում տարիներով կուտակած վիրավորանքն ու մաղձը: Այս ցիկլը շարունակվում է սերունդների մեջ:

Հայր ծնողը պետք է երեխային սովորեցնի կողմնորոշվել արտաքին աշխարհում, տարբերել լավը վատից, բարին՝ չարից: Հայրն է երեխայի ընդօրինակման աղբյուրը, ում անձնական օրինակը լուրջ ազդեցություն է գործում նրա ձևավորման վրա: Բարոյականություն քարոզող հայրը, որն իր վարքով այնքան էլ չի հետևում իր իսկ ասածներին, երբեք չի կարող նման որակներ սերմանել զավակի մեջ: Երեխան փոքր հասակից չափազանց շատ է զգում հոր կարիքը, նրա ներկայությունից թևավորվում է, ուրախանում: Ցավոք, երբեմն անպատրաստ հայրերը զանց են առնում այս հանգամանքը և ժամանակի մեծ մասը վատնում դրսում: Հոր սերն անհնար է փոխարինել կամ փոխհատուցել: Հայրն է այն հեղինակությունը, որի հետ շփումը օդ ու ջրի պես անհրաժեշտ է փոքրիկին,նրա սոցիալականացմանը,

աշխարհաճանաչողությանը: Ծնողների մեջ փոխադարձ հարգանքն ու սերը ևս շատ կարևոր պայման են երեխայի ինքնգնահատականի, հոգեկան առողջության ու դաստիարակության համար: Պետք չէ նսեմացնել ծնողներից որևէ մեկի դերն ու նշանակությունը երեխայի անձի ձևավորման գործում: Պետք է ձգտել նրան, որ ծնողների ու երեխաների բարի փոխհարաբերությունները փոխանցվեն սերնդեսերունդ: Կարևորելով ծնողի դերը երեխայի կյանքում և դաստիարակության մեջ, տեղին է հիշել .<< Մի հայրն ավելի շատ բան է նշանակում, քան հարյուր ուսուցիչը>>:

Իհարկե չի բացառվում, որ ծնողներին օգնության են գալիս դայակը, տատիկները կամ որևէ կրթական համալիր, բայց արդյունքում երեխան մնում է անտեսված, ունենում է ինքնավստահության պակաս, իսկ երբեմն էլ ցուցաբերում է հակասոցիալական վարքագիծ: Ինչպես նշեցինք, եթե ծնողը իր վարքով ու արարքներով դրական օրինակ չի հանդիսանում իր երեխաների համար, եթե նա անկեղծ սեր ու հեղինակություն չի վայելում իր երեխաների կողմից և չի հանդիսանում ընտանեկան արժեքների կրող, փոխանցող, պահպանող, ապա նրա դատիարակչական բոլոր միջոցառումները նման կլինեն դատարկ կրակոցի: Երեխայի լիարժեք ձևավորման ու զարգացման համար կարևոր է հետևյալ հարցերի պարզաբանումը. որքանով է ընտանիքը լիարժեք կատարում իր գործառույթները, որքանով են դրանք դաստիարակչական ազդեցություն թողնում երեխայի վրա :Այն գործոնները, որոնք ձևավորում են անձը ընտանիքում /ընտանիքի կազմը, ընտանիքի անդամների արյունակցական-հարազատական կապերը, ընտանիքի նյութական պայմանները, մեծերի և փոքրերի իրավունքներն ու պարտականությունները, փոխադարձ վերաբերմունքը, բարոյահոգեբանական մթնոլորտը/, որքանով են ծնողները պատրաստ երեխաներին խնամել, սիրել, դաստիարակել, որքանով է բարձր նրանց հեղինակությունը երեխաների աչքում: Այս հարցերի և մեր կողմից ուսումնասիրվող հիմնախնդրի շրջանակներում իրականացնենք փոքրիկ ուսումնասիրություն՝ Ըստ Դորոթի Լո Նոլթի ստեղծագործության՝ համեմատում, քննարկում, վերլուծում ենք, թե ինչպիսին կլինի երեխան

- Եթե երեխան շարունակ քննադատվում է, **կսովորի մեղադրել:**
- Եթե երեխան շրջապատված է թշնամանքով, **կտրամադրվի պայքարի:**

- Եթե երեխան ծաղրանքի է ենթարկվում, **երկչոտ կդառնա**:
- Եթե շարունակ ամոթանքի է ենթարկվում, **մեղքի զգացումը չի լքի նրան**:
- Եթե հանդուրժողականության մթնոլորտում է ապրում, **համբերատար կլինի**:
- Եթե խրախուսվում է, **վստահություն ձեռք կբերի**:
- Եթե գովասանքի է արժանանում, **կսովորի գնահատել**:
- Եթե ազնվության մեջ է մեծանում, արդարամիտ կդառնա:
- Եթե ապահովության մեջ է մեծանում, **կսովորի հավատալ**:
- Եթե հավանության է արժանանում, **ինքն իրեն կգնահատի**:
- Եթե ջերմությամբ է շրջապատված, **կսովորի սիրել**:

Երեխաների անցանկալի վարքի փուլերը՝

1) Չխրախուսվող վարք

2) Հանդիմանելի վարք

3) Դեվիանտ վարք

4) Նախահանցանքային վարք

5) Հանցանքային վարք

Անցանկալի վարքի պատճառները.

Հիմնական ուղղություններն են.

• Ընտանեկան դաստիարակության անբարենպաստ պայմանները:

- Ծնողների հակահասարակական վարքը

- Ոչ բավարար ուշադրություն և սեր ծնողների կողմից

- Գերհոգատարություն

- Երեխայի բոլոր պահանջները բավարարելը

- Ծնողների չափից դուրս պահանջկոտությունը և առարկություններ չհանդուրժելը:

-Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքի թերությունները երեխաների գիտելիքների գնահատման և դասերի անցկացման սթրեսածին միջոցներ

- Բացասական դիրքորոշումներ որոշ աշակերտների հանդեպ -
Ուսուցչի մասնագիտական ցածր մակարդակը

Իմ փորձառությունը

Իմ պրակտիկայում հանդիպել եմ մայր և դուստր կոնֆլիկտի, որ հասավ ընտանիքի ամուսնալուծության, մայր մեկնեց ՌԴ՝ երեք երեխաների խնամքը թողնելով տատիկի վրա: Մայրը աղջկա դասարանի ծնող կոմիտեի նախագահն էր, հարկավոր էր մայրիկի մասնակցությունը դպրոցի ընդհանուր ժողովին: Սակայն աղջիկը ներկայացրեց թե մայրը չի կարող մասնակցել՝ չնշելով պատճառ: Մեկ ամիս անց մայրիկի գտնվելու մասին աղջիկը պատմեց դասղեկին և ներկայացնելով անհավանական պատմություն նրա մասին: Փաստորեն ամուսնալուծության պատճառը աղջիկն էր: Մայրը փորձելով աղջկա վարքագծի նկատմամբ հետևողական և խիստ մոտեցում ցուցաբերել, հանդիպել էր աղջկա կոշտ ու ահաբեկող արձագանքին: Հայրիկը հաճախ էր բացակայում, հիմնականում մեկնում էր արտագնա աշխատանքի: Ընտանիքը ապահովված էր, երեք երեխայի դաստիարակությամբ զբաղվում էր մայրը: Աղջկա անցանկալի վարքի պատճառը նրա բոլոր պահանջների բավարարումն էր, բացասական դիրքորոշումներ նրա անձի նկատմամբ, հագնվում էր իր ճաշակով, ծախսում էր մեծ գումարներ, չստանալու կամ մոր մերժվելու դեպքում՝ սպառնում էր մորը: Զանգի միջոցով հայիկին մոր մասին վատ բաներ էր պատմում: Այս կոնֆլիկտի մեջ ոչ միայն աղջկա և մայրիկի, այդ ընտանիքի ճակատագիրն էր հարցականի տակ դրված, այլ նաև մյուս երեխաների: Հաճախակի անդրադառնալով կոնֆլիկտին, փորձելով կողմերին լսել առանձին-առանձին, հասկացա, որ աղջիկը չի ընդունում իր սխալը, անընդհատ առաջ է քաշում ծնողի պարտականությունները: Մայրը աղջկա նկատմամբ շատ ուշադիր էր, հագուստը միշտ մաքուր էր, կոկիկ, ուսման հետ կապված բոլոր անհրաժեշտ պարագաները ուներ, նա դասընկերներից քչերի հետ էր շփվում: Ինքը էր ընտրում իր ընկերներին և մենակ էր նստում: Ամեն մի զրույցի

ժամանակ ես փորձում էի փոխել նրա վերաբերմունքը մոր նկատմամբ, նրա դերը իր կյանքում, հասարակության արձագանքը ստեղծված իրավիճակի վերաբերյալ, ընտանիքի մյուս երեխաների համար օրինակելի լինելու մասին: Շատ դժվարությամբ երեխայի մեջ ներողամտությունն և վստահությունը կարծես արթնացավ, հայրը վերադարձավ ընտանիք և վերականգնվեցին խաթարված հարաբերությունները:

Քանի որ աղջիկը սովորում էր 12-րդ դասարանում, ուստի ընտանեկան վիճակը կարող էր ազդել նրա ուսումնառության վրա, այդպես էլ եղավ, հաջորդ կոնֆլիկտը ծագեց իր ուսուցիչ հետ, պատճառը այդ առարկայով չհետաքրքրվելն էր ու չմասնակցելը դասապրոցեսին: Աղջիկը արժանացավ իր ուսուցչի կոպիտ վերաբերմունքին, որը վիրավորեց նրան, իսկ նա այդ ամենը չհանդուրժեց, հեռացավ դասից: Ստեղծված իրավիճակին միջամտեց դպրոցի տնօրենը, դարձյալ մեղադրանքներ հնչեցին աղջկա հասցեին: Այդ ժամանակ ոչ ոք չգիտեր աղջկա ընտանիքում ստեղծված իրավիճակի մասին: Դասարանի աշակերտները և դասղեկը պաշտպանում էին աղջկան: Դասղեկը կարծես թե ստանձնել էր նրա <<մայրիկի>> կամ մտերիմ ընկերուհու դերը, ամեն կերպ փորձում էր կոնֆլիկը լուծել: Կոնֆլիկտը լուծվեց, նույնիսկ դպրոցը ավարտելու ժամանակ նա բոլորից ներեղություն խնդրեց: Բայց կար մի կարևոր բայց… Այս կոնֆլիկտը չէ ծագի, եթե սովորողը իր ամբողջ ժամանակը չտրամադրեր լրացուցիչ պարապմունքներին՝ կրկնուսույցի մոտ, որի պատճառով մյուս առարկաները մղվում են երկրորդական պլան, սովորողները ֆիզիկապես ի վիճակի չեն սովորել: Բուհ ընդունվելու համար սովորողները անգիր են անում շտեմարանները, որպեսզի հաղթահարեն ընդունվելու դժվարությունները: Պետությունը չափորոշչահեն կրթություն է պահանջում դպրոցից, սովորողից, բայց այդ կրթությունը բավարար չէ բուհ ընդունվելու համար:

Ուստի ստեղծված իրավիճակից դուրս գալու համար առաջ եմ քաշում այս վարկածը: Պետք է ընդհանրապես հանել շտեմարանները, կրթությունը չպետք է ծառայի միայն բուհ ընդունվելու համար, այլ մենք պետք է ձևավորենք ապագա քաղաքացի,որը պետության մեջ կիրացնի իր իրավունքներն ու պարտականությունները: Այդ քաղաքացին կունենա իր նկարագիրը՝ մտածող, քննադատող, վերլուծող, կշռադատող, համադրող, հակադրող և այլն:

Միջանձնային կոնֆլիկտների լուծման լավագույն տարբերակը դպրոցի կողմից մշակված ներքին **կարգապահական կանոնների** (որտեղ կլինեն նաև ծնողներին վերաբերող իրավունքներ և պարտականություններ) խիստ կիրառումն է ու **դպրոցի ճիշտ կառավարումը:**

Իմ փորձառությունը

Ծնող-երեխա հարաբերությունները պետք է մշտապես լինի դպրոցի համապատասխան պատասխանատուների՝ տնօրենի, դասղեկի, հոգեբանի և այլոց ուշադրության կենտրոնում: Իմ փորձառության ժամանակ ես մշակել էի երեխաներ հետ ծանոթության թերթիկ, որտեղ կար առանձին բաժին երեխայի ընտանեկան վիճակի մասին. օրինակ՝ 1.Ի՞նչ անդամներից է կազմված ձեր ընտանիքը, 2.Որտե՞ղ են աշխատում ձեր ծնողները, 3.Ինչո՞ւ ձեր ծնողը ընտրել մեր դպրոցը, 4.Ի՞նչ գիտեք մեր դպրոցի մասին և այլն: Մնանատիպ հարցեր ուղղեցի ծնողներին առաջին ծնողական ժողովի ժամանակ: Համեմատեցի երեխաների ու ծնողների պատասխանները, համարյա նմանություն կար, բայց դա սկիզբն էր, երեխան դեռ պետք է սովորի դպրոցում: Մի բան որ ինձ համար շատ կարևոր էր ծնողների կրթությունն էր, բարձրագույն կրթություն ուներ այդ դասարանի 20%-ը, մնացածը միջին մասնագիտական: Ինձ համար պարզ էր, որ ծնողների հետ պետք է անհրաժեշտ աշխատանք տանել: Բացի այն, որ հաճախակի մանկավարժական ընթերցումներ էի կազմակերպում, քննարկում էի նաև այն խնդիրները, որոնք մտահոգում էին ծնողներին իրենց երեխաների հետ կապված: Երբեմն միայն ծնողներին տանում էի ներկայացումներ դիտելու: Այս ձևով ստեղծվում էր փոխադարձ վստահության մթնոլորտ և ծնող-երեխա հարաբերություններում, երբ կոնֆլիկտ էր առաջանում ուսուցիչը միջամտում էր և գրագետ ձևով լուծվում էր:

Այսպիսով, առողջ ընտանիքը պետք է ձևավորվի այս արժեքների վրա՝ սիրո, ազնվության, վստահության, փոխօգնության, նվիրվածության, պատասխանատվության, հետաքրքրության, հայրենասիրության ներողամտության, մարդասիրության և ազգային արժեքների:

Ի հավելում վերոնշվածի՝ երեխաներիդ մի դաստիարակիր, միևնույն է, նրանք քեզ նման են լինելու: Դաստիարակիր ինքդ քեզ:

Գլուխ 2

Ուսուցիչ-երեխա հարաբերությունների բնութագրական տեսակները

Ժամամակակից դպրոցը պետք է լինի իրական կյանքի մոդել: Ինչպե՞ս ենք մենք ընկալում այդ դրույքը: Սովորողը մարդ է և որպես կենսաբանական կեցույթ՝ ապրում է հասարակության մեջ: Ինչպես մեկնաբանում են փիլիսոփաները, մարդը անսահմանին, կատարյալին ձգտող, բայց դրանց չհասնող էակ է: Նրան հասարակությունը պետք է վերաբերվի որպես մարդու և սովորեցնելով նրան չպիտի դիտի որպես ազդեցության օբյեկտ: Դպրոցում ստացած գիտելիքները պիտի օգնեն նրան, առավել ևս հիմա, դպրոցական կյանքը պիտի նրան հաղորդի իսկական կյանքի փորձառությունը: Դպրոցում պետք է սովորողը մշակի վարքի ու գործունեության այն մոդելները, որոնք գործուն կլինեն մեծ կյանքում՝ նրա մասնագիտական գործունեութանա մեջ: Գաղափարն ընդհանուր առմամբ ճշմարիտ է թվում, բայց այն ինչպե՞ս դարձնել իրականություն: Իրական կյանքում կան շատ խոչընդոտներ, անարդարություններ, անբարոյականություն, եսասիրություն, հաշվենկատություն և այլն: Դա մի աշխարհ է, որտեղ անկախ իր կամքից հայտնվում է երեխան, ինչպե՞ս ծանոթացնել այդ աշխարհին: Կրթական միջավայրում և ուսուցման պրոցեսում, ինչպես բնության ուսումնասիրության դեպքում է, սովորողին պետք է փորձել տալ կյանքի էությունը, իրական կողմերի մասին համալիր գիտելիքներ ու փորձ: Որպես ապագա քաղաքացի, դպրոցական կյանքում սովորողները իրենց մաշկի վրա պետք է զգան օրենքի ամենակարող ուժը, որ ոչ ոք իրավունք չունենա ոտնահարել իրենց մարդկային արժանապատվությունը, իրենք թեև սովորող են, բայց ունեն նույն իրավունքներն ու պարտականությունները: Այս ամենը կրթության մի աստիճանից մյուսը քայլ առ քայլ սովորողների մեջ կձևավորի վարքի ու գործունեության, մտածողության ընդհանրական մոդելներ,կարողություններ և հմտություններ, որոնք նրանց պետք կգան մեծ կյանքում:

Կյանքը սովորաբար մարդուն կանգնեցնում է ոչ ստանդարտ իրավիճակների առաջ՝ կրթությունը պիտի ձևավորի երեխաների մեջ հենց նման իրավիճակներից դուր գալու կարողություններ կամ այլընտրանքներ, կյանքին հարմարվելու և նրանում արդյունավետ գործելու

ընդունակություններ (օրինակ 44-օրյա պատերազմը երկրում ստեղծեց ծանր բարոյահոգեբանական և հուզական վիճակ, կորստի ու վախի մթնոլորտ, հարազատի կորուստ և այլն) : Այդ համալիր ձեռքբերումները կանվանենք մտահասություն: Ակնհայտ է, որ միասնացված ծրագրերով ու դասագրքերով ուսուցումը լիարժեքորեն տեղափոխվում է կրթության մեջ մտահասական մոտեցման գաղափարական դաշտ:

Մտահասական մոտեցումը ևս կարևորելով սովորողների մեջ՝ համալիր և ընդհանրական որակների ձևավորումը, հնարավորություն կտան մարդուն կողմնորոշվել ոչ ստանդարտ ու բարդ իրադրություններում:

<<Դպրոցում ամենակարևոր երևույթը, ամենաուսուցողական առարկան, աշակերտի համար ամենակենդանի օրինակը հենց ուսուցիչն է>>:

Ադոլֆ Դիեստերվեգ

Ուսուցիչը հանդես է գալիս որպես մանկական թիմի ղեկավար և իրականացնում է իր գործառույթները ինչպես ամբողջ դասարանի, այնպես էլ առանձին սաների հետ կապված: Նա խնդիրներ է լուծում ինչպես երեխաների տարիքի առանձնահատկություններին, ձևավորված հարաբերություններին համապատասխան,այնպես էլ յուրաքանչյուր երեխայի հետ հաստատելով անհատական և ընդհանուր, առանձնահատուկ հարաբերություններ: Իսկ երբ ուսուցիչը ստանձնում է դասղեկի պարտականություններ, նրա գործունեության մեջ գլխավորը անհատի ինքնազարգացմանը, նրա ստեղծագործական ներուժի իրացմանը նպաստելն է, կրթական կարիքների բավարարումը, երեխայի ակտիվ սոցիալական պաշտպանության ապահովումը, բարոյահոգեբանական պայմանների բավարարումը, անհրաժեշտ և բավարար պայմանների ստեղծումը երեխաների ջանքերն ակտիվացնելու համար: Լուծել սեփական խնդիրները. դիտարկենք ըստ մակարդակների.

Առաջին մակարդակը՝ մանկավարժական և սոցիալ-հումանիտար գործառույթներ, որոնք նա վերաբերում է թիրախային խմբին:

Այս գործառույթներն ուղղված են սոցիալական զարգացման համար պայմանների ստեղծմանը, որոնք ուղղված են երեխային օգնելուն՝ ինչպես իր

ակտուալ անձնական խնդիրները լուծելու, այնպես էլ ինքնուրույն կյանքի պատրաստվելու համար (իմ պրակտիկայում ի հայտ եկած կոնֆլիկտը լուծելու լավագույն գործառույթ): Դրանցից կարևոր են 3-ը `

1.երեխայի սոցիալական պաշտպանությունը շրջակա միջավայրի անբարենպաստ ազդեցություններից(գործնական, սոցիալական, ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական, քաղաքական, իրավական, հոգեբանական և մանկավարժական, տնտեսական, բժշկական և բնապահպանական միջոցառումների համակարգ):

Սոցիալական պաշտպանությունը առաջին հերթին հոգեբանական և մանկավարժական միջոցառումների մի շարք է, որոնք ապահովում են երեխայի սոցիալական օպտիմալ զարգացումը և նրա անհատականության ձևավորումը, հարմարվողականությունը առկա սոցիալ-տնտեսական պայմաններին: Այստեղ հատկապես խոսքը գնում է բազմազավակ ընտանիքների երեխաներ են, հաշմանդամ երեխաներ, ծնողազուրկ երեխաներ, փախստականներ և այլն, ովքեր մյուսներից ավելի կարիք ունեն շտապ սոցիալական պաշտպանության:

Իմ փորձառությունը

Երեխայի սոցիալական պաշտպանության խնդիրը կա և պետք է լինի ինչպես ուսուցչի, այնպեսել է դպրոցի ուշադրության կենտրոնում: Բազմազավակ երեխաներին տրվող աջակցությունը անվճար դասագրքերն են, բարեգործությունը, երբ գործարար ծնողները օգնություն են տրամադրում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին: 44-օրյա պատերազմի պատճառով երեխաներից մի քանիսը կորցրեցին իրենց հարազատներին, շատ ծանր վիճակում էին: Այդ վիճակից դուրս բերելու համար, նախ դպրոցը կազմակերպեց հիշատակի միջոցառումներ, մեծարեցին մեր հերոս տղաներին, շնորհակալություն հայտնեցին հերոսածին ծնողներին: Մի քանի երեխայի հետ աշխատեցին դպրոցի հոգեբանը, դասղեկները, դասընկերները:

2.կրթական նպատակներին հասնելու համար բոլոր ուսուցիչների ջանքերի ինտեգրումը:

Կրթական նպատակներին հասնելու համար ուսուցիչը պետք է լուծի մի շարք մասնավոր խնդիրներ՝ հատկապես կազմակերպչական՝ կապված դասարանում սաների և նրանց հասակակիցների միջև հարաբերությունների ձևավորման հետ (թիմի կազմակերպում, դրա համախմբում, ակտիվացում, ինքնակառավարում, ինքնազարգացում): Համայնքային և հասարակական կյանքին աջակից լինելու համար պետք է կազմակերպել երեխաների դրական նախաձեռնություն, որը կապված է մարզի, քաղաքի, գյուղի կյանքի (ճանաչողական, աշխատանքային, գեղագիտական, հաղորդակցային) բարելավմանը, միկրոմիջավայրի, դպրոցի և հենց դպրոցականների հետ:

Իմ փորձառությունը

Օրինակ, կազմակերպել ենք հանդիպումներ համայնքի ղեկավարների հետ, նրանց հետ քննարկել ենք համայնքի զարգացման ծրագիրը և մասնակիցը դարձել այդ ծրագրերի իրականացմանը: Այդ ծրագրերից է <<Մաքուր Հրազդանը>> ծրագիրը, հետևել քաղաքի մաքրությանը և տեղադրել աղբամաններ:

Կազմակերպել ենք <<Ճանաչիր քո քաղաքի պատմամշակութային օջախները>> էքսկուրսիաներ և <<Միասնական Հրազդան>> հասարակական կազմակերպության հետ իրականացրել ենք:

Երրորդ մակարդակում ուսուցչի գործառույթներն արտահայտում են կրթական գործունեության կառավարման առարկայի գործունեության տրամաբանությունից բխող պահանջները (կառավարչական՝նպատակադրում, պլանավորում, վերահսկում, ուղղորդում, ուղղում և ախտորոշում): Գործառույթների դիտարկված մակարդակները որոշում են դասարանի ուսուցչի գործունեության բովանդակությունը:

Դասի ուսուցչի պարտականությունները հետևյալն են.

1.ուսումնական գործընթացի կազմակերպում դասարանում, որն օպտիմալ է սովորողների անհատականության դրական ներուժի զարգացման համար՝ ամբողջ դպրոցի թիմի գործունեության շրջանակներում.

2.աջակցել սովորողին սուր խնդիրների լուծման գործում (ցանկալի է անձամբ ներգրավել հոգեբան);

3.ծնողների հետ կապեր հաստատելը և երեխաներին դաստիարակելու հարցում նրանց աջակցելը (անձամբ՝ հոգեբանի, սոցիալական մանկավարժի միջոցով).

Այսպիսով, դասարանի ուսուցիչը, գիտակցելով իր գործառույթները, այն մարդն է, ով անմիջականորեն կազմակերպում է ուսումնական գործընթացը և լուծում տալիս ինչպես բոլոր սովորողների, այնպես էլ նրանցից յուրաքանչյուրի խնդիրներին, կրթական կարիքները:

Ուսուցիչը կարգավորում է երեխայի ուսուցիչների և ծնողների հարաբերությունները: Նա ուսուցիչներին տեղեկացնում է դաստիարակության վիճակի, ծնողների առանձնահատկությունների մասին, կազմակերպում է ծնողների հանդիպումներ առարկայական ուսուցիչների հետ՝ երեխայի ուսուցման և դաստիարակության հաջողության մասին տեղեկություններ փոխանակելու, ծնողներին աջակցելու աշակերտների հետ տնային առաջադրանքները կազմակերպելու հարցում:

Դասղեկը առարկայական ուսուցիչներին ներգրավում է դասարանում արտադասարանական միջոցառումների պլանավորման(մրցույթներ, էքսկուրսիաներ, վիկտորինաներ, օլիմպիադաներ,արշավներ) և կազմակերպման մեջ, օգնում է համախմբել գիտելիքներն ու հմտությունները և հաշվի է առնում դպրոցականների մասնագիտական հետաքրքրությունները. ներգրավում է ուսուցիչներին ծնողների հետ հանդիպումների(ծնողական ժողով,) նախապատրաստման և անցկացման գործում:

Իմ փորձառությունը

Հերթական պարտադիր կամավոր ատեստավորումից հետո առաջին ծրագիրը, որ պետք է իրականացնենք, <<Լրացուցիչ նյութերի շտեմարանի>> ստեղծումն է: Քանի որ հեռախոսն ու համացանցն երեխայի առօրյայի մի մասն են կազմում, ուստի

այն կծառայեցնենք իրենց կրթական կարիքների համար: Ուսուցչի և երեխաների ջանքերով կհավաքենք լրացուցից նյութեր մեր դասերը ավելի հետաքրքիր դարձնելու համար: Այն կօգտագործենք մուտքի տոմսի համար, ընթացիկ քննարկումների ժամանակ, վելուծական, քննադատական մտածողության զարգացման համար: Շտեմարանը կունենա իր բաժինները: Առաջին բաժնի մեջ կտեղադրենք տվյալ դասարանի Հայոց պատմություն առարկայի սկզբնաղբյուրները, ինչպես նաև պատմիչների աշխատությունները մեր ստեղծած գրադարանում, երկրորդ բաժնում կտեղադրենք քարտեզները, երրորդ բաժնում՝ պատմական դեմքերի նկարները (այդ թվում ծաղրանկարներ), չորրորդ բաժնում՝ պատմական հուշարձանների նկարներ, հինգերորդ բաժնում՝ նամակներ, իրավական փաստաթղթեր:

Աշխատանքի մեջ կներգրավենք այդ դասարանի յուրաքանչյուր երեխայի, կբացատրենք աշխատանքի նպատակը և կսկսենք աշխատել յուրաքանչյուր բաժնի վրա: Հավաքելուց հետո ըստ բաժինների կդասավորենք ձեռբերված նյութը և կօգտագործենք դասերի ընթացքում: Այսպես մենք նախօրոք համակարգված կունենանք անհրաժեշ նյութը՝ կրճատելով ժամանակը, քանի որ այն շատ աշխատատար է:

Ծնողների օգնությամբ մենք կարող ենք կազմել նաև թղթային տարբերակը, գեղեցիկ տիտղոսաթերթով, առանձին բաժինների նաև գունավոր տարբերակը:

Այս համատեղ համագործակցային աշխատանքի միջոցով ավելի կամրապնդվեն ուսուցչի և սաների հարաբերությունները, այն նաև համատեղ ուժերով ինչ-որ արդյունքի հասնելու լավագույն ձևերից է:

Այսպիսով, մանկավարժական գործունեությունը ենթադրում է ուսուցման և դաստիարակչական աշխատանքի կազմակերպում: Դասարանում ուսումնական աշխատանքի կազմակերպիչը դասղեկն է:

Ուսուցիչ-սան հարաբերությունները նույնպես հարթ չեն, այս հարաբերություններում ամենամեծ չարիքը անտարբերությունն է: Հիմնական կոնֆլիկտը ծագում է, երբ ուսուցիչը ճիշտ չի գնահատում սաների կրթական կարիքները, խիստ ձևով պահանջում է մեծածավալ նյութ անգիր անել: Այն սաները, որոնք ի վիճակի չեն անգիր անել նյութը, մշտապես ստանում են ցածր գնահատական: Ուսուցիչը համառորեն պնդում է, որ պետական ծրագրի պահանջ է և ինքը պարտավոր է իրականացնել: Բոլորս գիտենք, որ ոչ բոլորն են կարողանում անգիր սովորել, ուստի ուսուցիչը պետք է հաշվի առնի այդ հանգամանքը, փոխի դասի միայն անգիր անելու պահանջը և հանձնարարի վերլուծել, մեկնաբանել, քննարկել նյութը: Այս կոնֆլիկտը հնարավոր է լուծել պետական չափորոշչի պահանջների հիման վրա, որտեղ հստակ պետք է գրված լինի անգիրից բացի, նյութի յուրացման այլընտրանք:

4.Ուսուցիչ-ծնող հարաբերություններ

Դպրոցի և ընտանիքի փոխազդեցությունը հավասար է ուսուցիչների և ծնողների փոխհարաբերությունների, որոնք համատեղ հաղորդակցվում և գործունեություն են ծավալում:

Երեխայի կյանքը կազմված է երկու կարևոր ոլորտներից՝ դպրոցից և ընտանիքից,որոնք անընդհատ փոփոխվում և զարգանում են: Կրթության կարիքների հաջող լուծումը հնարավոր է միայն դպրոցի և ընտանիքի փոխգործակցության պայմաններում: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը գնալով ավելի արդիական է դառնում իր բոլոր մարտահրավերներով: Քանի որ դպրոցում երկու կողմերն էլ ներկայացնում են իրենց սեփական պահանջները, մի կողմից ուսուցիչն է դժգոհում ծնողների անհետաքրքրությունից (դաստիարակություն, պասիվություն, բարոյական արժեքների բացակայություն,անտարբերություն),մյուս կողմից ծնողները՝ ավելորդ ծանրաբեռնվածությունից, ուսուցչի անտարբերությունից, երեխաների փոխհարաբերություններից: Այստեղ տեղին է ավելացնել հետևյալ խոսքերը.**«Երեխաների հետ աշխատելու ամենադժվարը նրանց ծնողների հետ աշխատելն է»: Եվ ինչպես գրում է ռուս մեծ ուսուցիչ Վ.Սուխոմլինսկին <<Ընտանիքում արմատներ են գցվում, որոնցից հետո աճում են ճյուղերը, ծաղիկներ և**

պտուղներ: Դպրոցի մանկավարժական իմաստությունը կառուղված է ընտանիքի բարոյական առողջության վրա >>:

Կրթական համակարգիը այնքան արագ են փոխվում, որ ծնողները հաճախ չեն հասկանում և հասցնում ընկալել, ուստի ուսուցիչը պետք է ծնողների համար հնարավորինս բաց, տեղեկացված և հասնելի դարձնի ուսումնական գործընթացը: Ուսուցչի և ծնողի միջև ձևավորված փոխըմբռնման և համագործակցության պայմաններում, ուսուցիչների հիմնական խնդիրներն են խթանել միասնությունը, ընտանեկան համախմբվածությունը, ծնողների և երեխաների միջև հարաբերություններ հաստատել, ընտանիքում երեխայի համար հարմարավետ պայմաններ ստեղծել: Ուսուցիչը ուզած-չուզած պետք է շփվի ծնողի հետ, երեխան էլ դառնում է կապող օղակը:

Ընտանիքը դա կրթական և տարբեր տարիքի կոլեկտիվ է, որտեղ դրվում է դաստիարակության (աշխարհի մասին պատկերացումների, հայացքների, զգացմունքների,սովորույթների, բարոյական արժեքների, սեռական դաստիարակության, մշակութային արժեքների և այլն) հիմքերը:

Կրթության մասին օրենքը ընտանիքին պարտավորեցնում է ստեղծել անհարժեշտ պայմաններ, որպեսզի երեխաները կարողանա կրթություն ստանալ ժամանակին ,երեխաների մեջ դաստիարակել բարոյական արժեքներ, աշխատանքային հմտություններ, հարգանք հանրային սեփականության նկատմամբ, առանձնահատուկ հոգ տանել երեխայի առողջության, նրա ֆիզիկական լիարժեք զարգացման համար:

Փորձը ցույց է տվել, որ ամենաարդյունավետը փոխգործակցության համագործակցային տեսակն է: Ուսուցիչների և ընտանիքների միջև համագործակցությամբ հնարավոր է համատեղ որոշել ապագա աշխատանքի պլանավորում, ռեսուրսների և ուժերի բաշխում, աշխատանքի արդյունքների վերահսկում և գնահատում:

Դպրոցի և ընտանիքի համագործակցության հիմքը երեխաների լիարժեք սոցիալական զարգացման, դաստիարակության և կրթության համար բարենպաստ պայմաններ ստեղծելու ընդհանուր նպատակն է : Այս նպատակն ուղղված է կրթության հետևյալ ընդհանուր խնդիրների

լուծմանը.

1. **սովորողների համար որակյալ կրթության ապահովում**
2. **մասնագիտական հետաքրքրությունների զարգացում և երեխաների նախապատրաստում մասնագիտության գիտակցված ընտրությանը**
3. **սովորողների մոտ բարոյականության և վարքի մշակույթի ձևավորում**
4. **դպրոցականների նախապատրաստումը դպրոցական կյանքին**
5. **առողջ ապրելակերպի անհրաժեշտության ձևավորում**

Այս խնդիրները լուծելու համար օգտագործում են հետևյակ գործիքները.

1.ծնողների ներգրավումը երեխայի զարգացման հեռանկարները որոշելու, գործողությունների ծրագրի մշակման գործում. դրանց ձեռքբերումների ապահովում.

2.ծնողների մասնակցությունը երեխայի ձեռքբերումների, նրա դժվարությունների և խնդիրների վերլուծությանը.

3.խրախուսում, աջակցություն, երեխաների դաստիարակության գործում ծնողների հաջողության քարոզչություն.

4.հոգեբանական և մանկավարժական կրթության կազմակերպում՝ ուղղված ծնողների համար հրատապ և էական խնդիրների քննարկմանը.

Ուսուցիչների նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորելու նպատակով իրականացվում է նպատակաուղղված աշխատանք. ուսուցիչները արտահայտում են իրենց հավանությունը երեխայի յուրաքանչյուր հաջողության նկատմամբ, հետաքրքրություն են ցուցաբերում երեխայի և ծնողների գործերի նկատմամբ, արձագանքում են ծնողների խնդրանքներին, կարծիքներին, անընդհատ տեղեկացնել դպրոցի և դասարանի գործերի մասին, ծնողական խորհուրներին լիարժեք մասնակից դարձնել դպրոցի կառավարմանը:

Երեխաներ դաստիարակելը խնդիր է ծնողների, մանկավարժների և հանրության ողջ համայնքի համար: Համախմբվելով՝ կկարողանանք հասնել առաջադրված խնդիրներին, որպեսզի մեր երեխաները լինեն դաստիարակված,

կրթված, ձևավորված:

Հայտնի է, ու հասարակությունը, ընտանիքը որոշիչ նշանակություն ունեն երեխայի անհատականության ձևավորման գործում, և դպրոցն այս գործընթացն ուղղորդում է կոնկրետ ուղղությամբ: Դրամատուրգ և գրող Վիկտոր Ռոզովը գրել է. <<Ես շատ եմ կարևորում ընտանիքը:Սա հենակետն է: Ընտանիք չկա. աճում է մոլախոտ, որը կոչվում է թմբուկ: Տունն այն վայրն է, որի շեմն անցնելով օրվա ողջ ծանր բեռն դեն ես նետում, հանգստանում, հանգտսանում, ուժ ես ստանում գալիք օրվա համար: Եվ որքան էլ ինձ պատմեն դպրոցի կրթական արժեքի մասին, անհատականության ձևավորման հիմքերը սկսվում են ընտանիքից>>:

Իմ փորձառությունը

Ուսուցիչ-ծնող հարաբերությունները միշտ չէ, որ հարթ են ընթանում: Հիմնական կոնֆլիկտը ծագում է ավագ դպրոցի սովորողների ծնողների ու ուսուցիչների, կամ տնօրեն-սան հարաբերություններում: Այդ տարիքային խմբի, հատկապես տղաների մոտ կան վատ սովորություններ. օրինակ ծխելը, դասից ուշանալը, անհարգելի բացակայելը և այլն: Դպրոցը այս հարցերը փորձում է լուծել ծնողների անմիջական մասնակցությամբ՝ զանգի, դպրոց հրավիրելու միջոցով: Բայց միշտ չէ, որ արդյունք է տալիս: Ծնողների մի մասը պատճառաբանում են, որ դա դպրոցի խնդիրն է, թող դպրոցը լուծի: Մի ծնող հերթական զանգին և դպրոց հրավիրելուն պատասխանեց հետևյալ ձևով, ես բժիշկ եմ, ծանր հիվանդ ընդունելու դեպքում ես մտածում եմ նրա կյանքը փրկել մասին, այլ ոչ թե օգնություն եմ խնդրել հարազատներից կամ ուրիշներից: Կոնֆլիկտը չլուծվեց, երեխան տեղափոխվեց այլ դպրոց, բայց դա լավագույն լուծումը չէր:

Այս խնդիրները լուծելու համար դպրոցը պետք է ունենա գրագետ և կարողունակ թիմ, որը ի վիճակի է լուծել կոնֆլիկտներ, որոնք պահանջում են երկարաժամկետ և կարճաժամկետ լուծումներ: Դպրոցներում հոգեբանի ինստիտուտը դեռ կայացած չէ, նրա և համապատասխան պատասխանատուների (ծնող, երեխա, տնօրեն, փոխտնօրեն, հոգեբան) պետք է պարտասխանատվություն կրեն

յուրաքանչյուր կոնֆլիկտի համար, կարևոր է նաև դպրոցի ճիշտ կառավարումը, ներքին խիստ կանոնների սահմանումն ու իրականացումը:

Եզրակացություն

Այսպիսով, սան-ուսուցիչ-ծնող հարաբերությունները պետք է կարգավորվել և կառավարվել դպրոցի զարգացման ծրագիրի (2 տարին մեկ ներկայացնում է տնօրենը, որտեղ շատ կարևոր է ռիսկերի գնահատումը) միջոցով.

● Համաշխարհային արդի զարգացումներն իրենց անմիջական ներգործությունն են ունենում հանրակրթական դպրոցի վրա՝ առաջադրելով տարատեսակ խնդիրներ:

● Պետության և ազգի անվտանգության ապահովման ու հզորացման գործում գերխնդիր է դառնում պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը:

●Գերխնդիրը կրթության կազմակերպման առավել կատարյալ ձևերի և եղանակների մշակումն ու կիրառումն է և դրանցով ուսուցման բարձր որակ ապահովելը:

●Հիմնական կրթությունը պարտադիր և հասանելի է յուրաքանչյուր անձին, անկախ նրա հետաքրքրություններից, նախնական մասնագիտական կողմնորոշումից, մտավոր և ֆիզիկական կարողություններից:

●Հանրակրթությունը պետք է իրականացվի ազգային հիմքի վրա՝ համամարդկային արժեքների ներդաշնակ զուգորդմամբ:

●Հանրակրթությունն իրականացվում է սովորողների տարիքային առանձնահատկություններին և զարգացման մակարդակին համապատասխան:

● Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց

կրթությունը իրականացնելու նպատակով տարեցտարի հարստացնել դպրոցի նյութատեխնիկական բազան (ներառել սովորողների համար անհրաժեշտ տարածքներ, կառույցներ, ինչպես նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց ուսուցման համար անհատական

տեխնիկական միջոցներ և սարքավորումներ, համակարգչային դասարաններ, սննդի, բժշկական սպասարկման, առողջարարական և բուժիչ-կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում, սանիտարահիգիենիկ սպասարկում):

●Ուսումնադաստիարակչական աշխատանքի հիմքում պետք է դրվի ազգային արժանապատվություն ունեցող հայ մարդու դաստիարակությունը, որը ճանաչում, ընդունում և հարգանքով է վերաբերվում իր և ուրիշ ժողովուրդներին, նրանց ստեղծած հոգևոր և մշակութային արժեքներին:

●Շատ կարևոր է հասարակության մեջ բարձրացնել ուսուցչի հեղինակությունը ամեն հնարավոր միջոցներով, քանզի ուսուցիչն ինքը էլ ավելի կարժևորի իր գործունեությունը, կբարձրացնի իր ինքնագնահատականը և ավելի պատասխանատու և ազնիվ կվերաբերվի իր գործունեությանը և

գործունեության արդյունքին: Ուսուցիչն է, որ պատասխանատու է յուրաքանչյուր նոր սերնդի կրթական մակարդակի և տվյալ սերնդի մեջ սերմանած արժեքային համակարգի համար:

Դեռ 18-րդ դարում հայկական դպրոցներից մեկի կանոնադրության մեջ ամրագրված էր հետևյալ դրույթը. <<Ուսուցիչի հայրենասիրության և առաքինության վարքը ավելի նախապատվելի է, քան նրա անկանոն տաղանդներն ու ձիրքերը>>:

Լիահույս եմ, որ նմանատիպ արժեքներ ունեցող ուսուցիչների առկայությամբ մենք կգրանցենք լավագույն հաջողությունները կրթության և դաստիարակության գործընթացում:

Պետական քաղաքականության և հասարակական գիտակցության մեջ կրթությունը գերակայությունների շարքում շարունակում է մնալ որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր գործոն:

Կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը և մատչելիությունը՝ քաղաքացիներին իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու համար:

Մանկավարժությունը ընդգծում է ընտանիքի գերակայող դերը

երեխայի դաստիարակության և անձնավորության ձևավորման գործում: Ակնհայտ է, որ ծնողներն են երեխային դաստիարակող առաջին մանկավարժները:Նրանք ունեն իրավունքներ և պարտականություններ իրենց երեխաների կյանքի մտավոր ու ֆիզիկական զարգացման և արժեհամակարգի ձևավորման առումով:Այստեղ հարց է առաջանում. Ծնողները ճանաչում են, արդյոք,իրենց երեխային: Երեխայի դաստիարակման գործընթացում համար առաջին ազդեցիկ ուժը սեփական օրինակն է ` թե' ծնողի, թե' ուսուցչի: Ինչ խոսք, երեխային չպետք է թողնել ազատ: Պետք է ճանաչել երեխային, իմանալ նրա նախասիրությունները և ուղղորդել դեպի այն աշխարհը, որտեղ գտնվելը երեխայի գերագույն հաճույքը կլինի: Այս ամենը ճիշտ կազմակերպելու հիմքը դպրոց-ընտանիք ամուր կապն է, որը կրկին ընկած է դպրոցի ուսերին:

Այսպիսով, ճիշտ գնահատելով երեխայի կրթական կարիքները, նրանց ներգրավվերով այդ գործընթացի մեջ պետք է համատեղ ուժերով (սան-ծնող-ուսուցիչ) կարողանալ կառուցել այն տուն, որի մեջ լինի բոլորի ներդրումը, աջակցությունը: Վստահ եմ համատեղ ջանքերի ներդրմամբ կստեղծվի մեր<< Լրացուցիչ նյութերի շտեմարանը>>:

Օգտագործված գրականության ցանկ

*1.*Գագիկ Մելիքյան, սարգիս Գալոյան, Չափորոշչահեն կրթությունը Հայաստանի Հանրապետությունում <<Մանկավարժություն>> 5. 2011թ.

2. Уоллес Диксон. Двадцать великих открытий в детской психологии.-СПб: прайм-ЕВРОЗНАК, 2004. -448 с.

3.Уильям Крэйн. Теории развития. Секреты формирования личности. 5-ое международное издание: прайм-ЕВРОЗНАК, 2002.-512с.

*4.*Վորոնով Վ. Դպրոցի մանկավարժությունը մի խոսքով.

վերացական-նպաստ / Վ. Վորոնով. - Մ.: Ռուսաստանի մանկավարժական ընկերություն, 2002. - 192 էջ.

5.Էրեմինա Ռ.Ա. Դասի ուսուցչի գործառույթներն ու հիմնական գործունեությունը / Ռ.Ա. Էրեմին. - Մ.: Վլադոս, 2008. - 183 էջ.